զգործ պատշաճ ունկնդրութեան. ի սոյն մաշեն և բազումք ի գեղջկաց զերկայնութիւն ձմերային գիշերոյ, առհասարակ արք և կանայք և մանկունք անգամ ախորժանօք անձանձիր լսելով զսքանչելի գործս Ռուստէմայ Սագճկի (Սաջաստանցւոյ կամ Սագաստանցւոյ) և զհրաշալիսն Բ-էշ Նժուգի Նորա՝ նմանահանգոյն արծուենման Սեաւին գեղեցկի մերս Արտաշիսի, զառասպելախառն այլաբանութիւնս քաջամարտ — դիւաբաղ Հուշանգի՝ հանգոյն մերս վիշապաքաղ Վահագնի, զդիցանուէր վեհութիւնս արգարադատն Անուշիրուանայ (Անուշաւանայ), նա մանաւանդ զհրաշապատում վէպն Ֆրանգիսի, լի չքնաղ նահատակութեամբք առաքինութեան և կենդանի նկարագրութեամբք, այլովքն հանդերձ, յորոց առ այժմ զայս երկու դոյզն հատուածս և եթ առ ձեռն պատրաստ ունիմք ի լոյս ընծայել, զընտրելագունից թարգմանութիւն թողլով այլում նուագի.

Սամուէլ Գիւլզադեանց.

1.

Ի ՄԱՀ ՔԱՋԻՆ ՍՓԱՆԴԵԱՐԱՑ (ՍՊԱՆԴԱՐԱՑ).

Ժամ է արդ քամել բաժակ մի անապակ անուշահամ գինւոյ՝ մինչդեռ շունչ քաղցրասիք գարնան բերէ մեզ զհոտ անուշից հովասուն լերանց. Ծաղիկք գարնանային պսակեն զսաղարթս անտառախիտ մայրեաց և բլուրք շողան ի փայլիւն հրաշէկ կակաչաց և ի նարօտ պէսպէս երանգաց. Հրճուէ սոխակ գեղգեղելով ի ծոց սիրանոյշ վարդենեաց և գոհար վարդ փթթէ պչրանօք ի լուր երգոց խօսնակին.

Եւ լիցի՞ն արդեօք այլ ևս լսելի հեշտալուր գայլայլիկք նորա, յորժամ բաժակն վարդագոյն՝ վարդենւոյ ծածկեսցի մարգարտաշար քաղցրահոս ցօղով գիշերոյ. — Ո՛չ. աւանիկ յառաջ խաղայ ամպ մռայլ՝ հալածական վարեալ ի փոթորկալից հողմոյ . . . Ոչ է այդպէս՝ յորժամ նստեալ խօսնակն ի գեղուղէշ փունջ վարդենեաց՝ երգէ զսէր իւր խանդակաթ. Ո՞ գիտէ զի՞նչ նա խօսի արդ . . .

Նա ողբայ զՍպանդար. զՍպանդարն բարձեալ կապտեալ ի փառաց անդսոին ի մատաղատունկ տիոցն երիտասարդութեան. Նա պատմէ քեզ յորդելով զհինաւուրց անցից անցելոց. զոր սովոր էին նախնիք մեր պատմել հարցն մերոց.

2.

ՄԵՆԱՄԱՐՏ ՔԱՋԻՆ ՍԱՄԱՑ.

Ընդ երևիլ հզօր արքային Մանուչէհրի (Մանաճիհրի), անկաւ անդէն որդի նորա Սամ ի վերայ երեսաց և երկիր եպագ նմա. Ցարեաւ հայրն օգոստափառ ի գահոյիցն փղոսկրեայ և ափուեցին կայծակունս հրոյ մեղեսիկք և տպազիոնք ականազարդ թագի նորա. Զգեալ զձեռն իւր շնորհալից, նստոյց առ իւր զՍամ, և ի հարցանել հօրն ստիպաւ՝ թէ զի՞նչ եղեն գայլքն մարդասիրաշունչք՝ խուժադուժքն Մազանդրանեայք (Ղրկանք), եւ

պատասխանի Սամ և ասէ. Ո՛չ ես եմ, հայր, և յաւել պատմել Նմա զելս պատերազմին՝ օրինակ զայս.

Դիմեալ գայր որպէս գայլ արեան ծարաւի՝ անցեալ ի գլուխ հրոսակին՝ Կարկաւոյ եղբօրորդի մեծի արքային Սալեմայ. Զափ հասակի նորա վիթխարի հաւասարէր մատաղատունկ մայրւոյ և քաջքն դիւցազանց անգամ խիթային յերեսաց հսկային սերելոյ ի զոհակազարմ վիշապածին մօրէ.

Իբրև տեսին զնա քաջամարտիկքն իմ ընդ մէջ փոշւոյն փոթորկելոյ ի ներքոյ ոտից նորա, շրջեցաւ անդէն գոյն երեսաց նոցա ի գալուկն մեռելատիպ. Ի բաղխել մարտին երկուստեք, յարձակեցայ անկայ հապճեպ ի մէջ հեծելազօրուն, և ընդ մէջ ճեղքեալ զգունդն ստուարախիտ՝ հորդեցի ինձ ռահ զարհուրելի երկաթագամ գնդափայտիւս. Սլացաւ նժոյգն իմ օդապարիկ զերթ փիղ ամեհի և երկիր սասանէր ի ներքոյ ոտից սալասմբակ երիվարացս հանգոյն ալէծուփ կոհակաց Նեղոսի. Քաջալերեցաւ յիս գունդն իմ և զհետ իմ խեզախեաց ի վտանգիցն աներկեան.

Իբրև ետես Կարկաւոյ զնախճիրս իմ, զոր ընդ աջ և ընդ ահեակ ճակատուն գործէի, ծանեաւ զիս, և հանգոյն յանդուգն որսահալած վագեր՝ թակարդէր ինձ զպարան ձեռին ըմբռնել զիս ի հաղբ. Գիտացի զնենգութիւն մտացն, կալայ զաղեղն իմ և արձակեցի դէպ ուղիղ ի նա զերկաթասլաք նետս իմ կաղամախեայ. Թռեան նետքս թեթև զերթ արծուի սրաթռիչ . . . կործաւ նա վայրիկ մի յաչացս և ահա անդրէն միւսանգամ եկն յերևան դէմյանդիման իմ ի մէջ արիւնախառն փոշւոյ, ճոճելով ի ձեռին զսուրն իւր պողովպատիկ ականակուռ, և դողայր երկիր ի դոփիւն ոտիցն. Դուլ ետու խուն ինչ երիվարին իմում և կացի մնացի նմա անդէն կուռ և կազմ. Յարձակեցաւ յիս վայրագն վարազաբար. կշռեաց ետ ընդ ետ զհարուածս մահաբեր սրոյն, այլ իմ խոյս տուեալ ի սրոյն, վրիպեաց կշիռն. դարձայ շուտափոյթ, բուռն հարի զսաղաւարտէն և անհաւատալի իմն ուժգնութեամբ ընդ թափ կործանեցի զնա յերկիր արիւնաշաղախ և մխեցի զսուր իմ յախոյանդիւն.

Թարգ. ՍԱՄՈՒԷԼ ԳԻՒԼԶԱԴԵԱՆՑ.

ՖՐԴՈՒՍԻ